

կապես մեն արժեքը, որ ներկայացնում են Դավիթ Անհաղթի հայացքները հերմենևտիկայի՝ հնդիկականության տեքստերի մեկնաբանության տեսության համար: Հայ փիլիսոփայի նրանք աշխատությունները անմիջականորեն հերմենևտիկական բնույթի են՝ նվիրված Արիստոտելի և Պորփյուրի աշխատությունների վերլուծությանը: Գ. Բրուսյանը հանգում է այն մտքին, որ Դավիթ Անհաղթը հնդիկականության տեքստերի սոսկ մեկնիչ է: Այդ տեքստերի մեկնաբանության կարևորագույն սկզբունքներից մեկը նա համարում է հմարտությունը, մեկնաբանվող տեքստերի օրինակով վերարտադրությունը: Այս կապակցությամբ ուղարկության արժանի է անհավաստի աշխատությունների ձևերի և առարկայական պատճառների Դավիթ Անհաղթի վերլուծությունը: Ընդ որում, ընդդեմ է Գ. Բրուսյանը, Դավիթ Անհաղթը հետևողականորեն հիմնավորում է իր մոտեցումը, փաստարկներ բերում հոգու հետապոստության իր եզանակի, որով և հարստացնում է փաստարկման տեսությունը (էջ 19):

Նկատենք, որ պրոֆ. Գ. Բրուսյանը, Դա-

վիթ Անհաղթի աշխատությունների ձևագրերի հիման վրա, մի շարք հզորություններ է կատարում անվանի փիլիսոփայի գործերի համահավաք ընկալման ընադրերի և նրանց թարգմանությունների կապակցությամբ:

ՀԱՄԷ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուսյանի հետազոտության մեջ Դավիթ Անհաղթի տրամաբանական ուսմունքը ներկայացված է գիտական լուրջ ըննությամբ: Տրված գնահատականները և մեկնաբանությունները փաստարկված են: Եթե մասնակ մատնանշված են Դավիթ Անհաղթի այն զաղափարները, որոնք առնվում են ժամանակակից տրամաբանական գիտության պրոբլեմների հետ կամ չափան զեր են խաղացել տրամաբանական գիտության դարգացման մեջ: Այս բոլորը հնարավորություն է ընձեռել հիշտ արժեքավորել Դավիթ Անհաղթի գիտական ժառանգությունը և նշել նրա տեղը փիլիսոփայության պատմության մեջ: Պրոֆ. Գ. Բրուսյանի այս բոստ ամենալի արժեքավոր աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության մեջ:

Ռ. Զ. ՋԻՋՅԱՆ

Պ. Ա. ՉՈՒԱՆՅԱՆ. Վրացական ուղեգրություններ և նրանց տեղեկությունները Լուսերի մասին. ՀԱՄԷ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, 199 էջ:

XVIII դարի առաջին քառորդում սկզբնավորված վրացական ուղեգրական մատենագրությունը ուրույն տեղ է զբաղում Անդրկովկասի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների վերջին հարյուրամյակների պատմության աղբյուրների համակարգում: Մաղիով ու զարգանալով պատմողական աղբյուրների ավանդույթների հիմքի վրա, ուղեգրական երկերը ունեն տարաբնույթ փաստերն ընդհանրացնելու միտում և միաժամանակ զրկված լինելով ոչ միայն ականատես, այլ նաև ծավալվող իրադարձությունների անմիջական մասնակցություն չունեցող գործիչների կողմից, զգալի չափով այլ սկզբնաղբյուրներից անհայտ նյութ են մատուցում հետազոտողներին: Վրացական ուղեգրական հուշարձանները, չինայա՝ ամբողջությամբ հրատարակված լինելու հանգամանքին, մինչև այժմ չլին ենթարկված միասնական ուսումնասիրության, առանց րացահայտվելու չեն մնում վրացական ուղեգրական մատենագրության արժեքը Արևելքի երկրների պատմության համար: Զգնահատված չեն մնում մասնավորապես այդ հուշարձանների կարևորությունը հայկական զաղթության պատմության, Արևելքի երկրներում հայերի ծավալած գործունեության ուսումնասիրության տեսանկյունից: Գոախոսվող մենագրությունը ոչ միայն

ըրացնում է կովկասագիտական-արևելագիտական գրականության մեջ վաղուց զգացվող այդ բացը, այլև բազմալեզու սկզբնաղբյուրների ըննությամբ լուսարանում է հարակից այլ խրեղիները ևս:

Աշխատության հեղինակը առանձին պոլսներ է նվիրել Սուլիսան-Սարա Օրբելիանի, Տիմոթեոս Գարաշվիլու, Իոնա Գեղեհանիշվիլու, Ռաֆայել Դանիրզովի, Գիորգի Ավալիշվիլու երկերի ըննությանը: Ցուրարանչուր ուղեգրական հուշարձանի ուսումնասիրությունը հեղինակը սկսել է այդ երկր ստեղծողի կյանքի և գործունեության ամփոփ թուղթագրություն ու գրական ժառանգության արժեքավորումով: Քաջատեղյակությունը մասնագիտական գրականությանը և աղբյուրագիտական պատշաճ պատրաստությունը հնարավորություն են ընձեռել ամեն մի զլխի ներածական հատվածում մատենագիտական առումով հարուստ տեղեկանքներ ներկայացնել յուրաքանչյուր հեղինակի մասին: Ընթերցողը աշխատության այդ հատվածներից կարող է իրեն հետաքրքրող բազմազան տեղեկություններ բաղել տվյալ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության, Անդրկովկասի բազարական կացության վերաբերյալ և միաժամանակ ի մի բերված կզտնի արծարծվող խրե-

դիրներին շուրջ գոյություն ունեցող հիմնական գրականությունը (մասնագիտական գրականությունը լիակատարությամբ ներկայացնելու ձեռնարկը երբեմն այնքան ուժեղ է եղել, որ պատճառ է դարձել որոշ անհարկի կրկնությունների, համար., օրինակ, էջ 6—11, 22—23, 39—40, 102, 111):

Պ. Չոբանյանը վրաց ուղեգիրների վկայությունները քննելիս ու արժեքավորելիս հաճախակի դիմել է նաև հայկական, ռուսական, եվրոպական սկզբնաղբյուրներին։ Ս.-Ս. Օրբելիանի «Ուղեգրություն Նավոպայում» երկը հետազոտելիս համակողմանիորեն քննել է Եղիա Կարենցու 1715 թ. մարտի 13-ի նամակը ուղղված կաթոլիկ միսիոներ Բոնգարին։ Ինչպես ցույց է տալիս հետազոտողը, Ս.-Ս. Օրբելիանի ուղեգրությունը Ֆրանսիա և Իտալիա ոչ միայն հայտնի է եղել որոշ հայ գործիչների, այլև նրանք ևս անհամբերությամբ են սպասել դեսպանագնացի առաքելության արդյունքներին։ Մենագրության այս նույն գլխում հեղինակը արժեքավորում է Եվրոպայում ապրող հայերի մասին վրաց ուղեգրի հաղորդած տեղեկությունները։ Համադրությունը հայկական աղբյուրների հետ թույլ է տվել պարզելու, որ Լիվոռնո քաղաքում ուղեգրի տեսած «շորս վրացի քաղաքացի»-ները, որոնցից մեկը եղել է «տեքտեր», իրականում եղել են վրաստանցի հայեր։ Պ. Չոբանյանը ցույց է տալիս, որ սա եզակի դեպք է վրաց մատենագրության մեջ, ինչպես նաև ապացուցում է, որ հայկական աղբյուրներում ևս վրաստանցի հայերը հաճախ «վրացի» են կոչվել։

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը, անհրաժեշտության դեպքում, ուղեգիրների հաղորդումների ճշգրտությունը համակողմանիորեն քննելու մտահոգությամբ պրպտումներ է կատարել նաև նախորդ դարերի պատմության որոշ խնդիրներ լուսաբանելու ուղղությամբ։ Հատկապես գնահատելի է ուսումնասիրողի վաստակը Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի պատմության V—XII դդ. ժամանակահատվածի հետազոտության ասպարեզում։ Հանգամանորեն ճշգրտելով Երուսաղեմում Ս. Հակոբի անունով հայտնի հայկական ու վրացական վանքերի տեղը, ժամանակը, հեղինակը համոզիչ կերպով ապացուցում է, որ գիտական գրականության մեջ այժմ էլ հաճախ վկայակոչվող Տ. Գաբաշվիլու հաղորդումները հայկական Ս. Հակոբյանց պատրիարքանիստ վանքի նախապես վրացական լինելու վերաբերյալ, իրականում վերաբերում են մեկ այլ՝ Հակոբ Ալիեմի վանքին։

Վրաց ուղեգիրներից Գ. Ավալիշվիլու համառոտ վկայությունների և նորահայտ այլ նյութերի հիման վրա հեղինակը ճշգրտում է Հարություն Արարատյանի կյանքի 1795—1831 թթ. ժամանակահատվածի տարեգրությունը, ցույց տալիս նրա գործունեության հայրենասիրական ուղղվածությունը։

Գրախոսվող գրքում զգալի տեղ են գրավում աղբյուրագիտական դիտարկումները։ Բերվում են վրաց ուղեգիրների երկերից պրոֆ. Լ. Մեղիքսեթ-Բեկի կատարած թարգմանությունները՝ անհրաժեշտ լրացում-ճշգրտումներով, մասնազետների ուղադրություն է հրավիրվում անտիպ նյութերի վրա, բացահայտվում են ուղեգրական բնագրերում ըմտնացուցված իրական սկզբնաղբյուրները։ Այսպես, հակառակ Գ. Ավալիշվիլու հավաստիացումներին՝ Այա Սոֆիան և Կոստանդնուպոլիս որոշ այլ հուշարձանները չեղարկվելիս «հունարեն տպագրի գրքի» թուրքերեն թարգմանություն ձևով տակ ունակու վերաբերյալ, ուսումնասիրողը պարզում է, որ ուղեգիրը օգտվել է բառացի ընդարձակ քաղումներ կատարելով, Գ. Ինճիճյանի աշխարհագրական աշխատությունից։ Պ. Չոբանյանը անդրադառնում է նաև Գ. Ավալիշվիլու «Ուղեգրության» այն հատվածին, որն արդեն արժանացել էր հայագետների ուղադրությանը իբրև կեսարահայերի բարբառի հետազոտության առումով ուշագրավ գրառում։ Վերստին դիմելով «Ուղեգրության» ինքնագրին, հետազոտողը պարզում է, որ այդ «գրառումները» նախապես վրացերեն գրված նախադասությունների գրաբարախառն հայերեն թարգմանություններ են։

Ուշագրավ արդյունքներ են տվել հեղինակի պրպտումները Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի ու Լենինգրադի արխիվներում։ Վրացագետներից առաջինը Պ. Չոբանյանին է հաջողվել Վ. Ի. Լենինի անվան գրադարանի ձեռագրերի բաժնում հայտնաբերել Տ. Գաբաշվիլու հաշվետվությունը ռուսական իշխանություններին՝ իր ուղեգրության արդյունքների մասին։ Բնագրի հրապարակումը հետազոտողը օժտել է մանրամասն մեկնարանություններով, որոնք բացահայտում են Տ. Գաբաշվիլու ճանապարհորդության ցարդ անհայտ քաղաքական դրդապատճառները, ուղեգրի դիտարկումների նպաստը թուրքիայի ներքաղաքական վիճակի, թուրքական բռնատիրության տակ հեծող ժողովուրդների աղատագրական ակնկալիքների, թուրքիայի և այլ երկրների ու ժողովուրդների փոխհարաբերությունների ուսումնասիրության առումով։

Դ. Դանիբեգովի «Ճանապարհորդության դեպի Հնդկաստան» աշխատությանը նվիրված



գլխում ուսումնասիրողը առավել մեծ ուշադրություն է նվիրել պատմական ու ժամանակագրական խնդիրների հետազոտությանը. նախադրին շփ լիակատար է ներկայացված Ռ. Դանիբեգովի «որ՝ Զովսեի Դինիբեկյանցի դիվանագիտական առաքելությունների տարեգրությունը, Ռ. Դանիբեգովի ճանապարհորդությունների զրգապատճառների պարզաբանումը: Համեմատաբար համեստ է ուսումնասիրողի ձեռքբերումը բուն երկի աղբյուրագիտական-բնագրագիտական քննության ուղղությամբ: Ինչպես նախորդ է, Ռ. Դանիբեգովի ուղեգրական գրառումները, «մերոցն և այլազանց աշխարհագրաց» ոգնությունը ուսուերենի է թարգմանել Հ. Ալամդարյանը: Ի դեպ, վիճարկելի է Պ. Զորանյանի այն տեսակետը, թե բացառված չէ, որ այդ գրառումները ամբողջությամբ եղել են վրացալեզու (էջ 104), «վրացերենից զրավոր կամ բանավոր ձևով թարգմանվել են հայերենի» և հեղինակային այդ թարգմանությունն է, որ Հ. Ալամդարյանը «խմբագրելով փոխադրել է ուսուերենի» (էջ 106): Այս բացատրությամբ ամենևին անհասկանալի է մնում, թե ինչու մայրենի լեզվին այդքան հմուտ Դանիբեգովը, որը Հնդկաստանում ամենից հաճախ շփվում էր հենց հայերի հետ, իր նախնական գրառումների գոն մի սասը չէր կարող կատարել հայերեն: Մի՞թե նա կարող էր հաշվի չառնել այն հանգամանքը, որ վրացերենը անհասկանալի լեզու է Հնդկաստանում և վերահաս փորձության դեպքում: Հայերեն գրառումները կարող են ուշադրության արժանանալ և փրկվել հայերենակիցների կողմից: Ընթերցողները պահանջում է ասել, որ ուսումնասիրողի այն համոզումը, թե «հայկաբանություններն իսկ վերջնականապես չեն կարող լուծել բնագրի ինչ լեզվով գրված լինելու հարցը, որովհետև զրանք շարագրված ու խմբագրված են Հ. Ալամդարյանի ձեռքով, իսկ վերջինս, հարկավ, կարող էր հայկաբանություններ թույլ տալ, քանի որ, իր իսկ հաղորդմամբ, նա օգտվել է հայկական աղբյուր-

ներից», որովհետև ինքնաբերական է պատմական-հեղափոխական և հոր հաստատման հանգրի պարզաբանմանը նպաստելու գործին: Կաթուղի է նախատեսված այս գլխում աշխարհային բանություն չի ստացել Ռ. Դանիբեգովի ձեռքբերող ճանապարհորդության (1799—1813 թթ.) Մադրաս հասնելով սկզբնավորվող համաժամը: Դանիբեգովի XIII-ի հանձնարարությունը կատարելուց հետո անմիջապես վերադարձի ուղին չեն ելել քան մեկ տասնամյակ Հնդկաստանում մնալը, ոչ թե Վրաստան, այլ Ռուսաստան վերադառնալը, հայց կաթողիկոսի և լազարյանների ջերմ ընդունելությունը Ենթադրել են տալիս, որ Դանիբեգովը կասկած ուներ լազարյանների հետ և, թերևս, ուսական քաղաքականությունից բխող հանձնարարություններ էր կատարում շատ վաղուց. մինչև ուսական ծառայության մեջ մտնելը:

Գրքի եզրափակիչ գլխում Պ. Զորանյանը անդրադարձել է նաև վրացական այն ուղեգրություններին, որոնք նվազ արժեքավոր նյութ են պարունակում հետազոտվող շարքերի քննության առումով: Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում աշխատության հավելվածը, որտեղ հրապարակված է հինգ ուղագրավ փաստաթուղթ, ընդ որում գրանցից երեքը տպագրվում են առաջին անգամ:

Գրախոսվող աշխատության առավել շահեկան կողմերից է հայագիտության և վրացագիտության ձեռքբերումների պուլակցումը, հայկական գաղթյալների պատմության ուսումնասիրության ավանդական աղբյուրագիտական հիմքի նշանակալի ընդլայնումը, հայագիտական խնդիրների արժարժումը Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմության տվյալների համադրությամբ: Այսպիսով, մասնապես երբ սեղանին է դրվել մենագրություն, որը գնահատելի ավանդ է ինչպես կովկասագիտության, այնպես էլ Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրության քննադատական:

Հ. Պ. ՄԱՐԿԱՐԴՅԱՆ